ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/34

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 27.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/34 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.02.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին, հայտի

ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, «Կարեն Սարգսյան» ԱՁ-ն և «Զարուհի Տոնոյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 3-14-րդ, 16-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 49-51-րդ, 55-62-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Կարեն Սարգսյան» ԱՁ-ն:

«Կարեն Սարգսյան» ԱՁ-ն գնային առաջարկ է ներկայացրել 3-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 48-53-րդ, 55-64-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով՝ որի ընդհանուր գինը կազմել է 13 639 840 ՀՀ դրամ: «Կարեն Սարգսյան» ԱՁ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 30.01.2018թ.-ի տուժանքի մասին համաձայնագիրը, որի գումարը կազմում է 682 000 ՀՀ դրամ:

Այսպիսով «Կարեն Սարգսյան» ԱՁ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 13 639 840ՀՀ դրամ, որի 5 տոկոսը պետք է լինի 681 992 ՀՀ դրամ, սակայն «Կարեն Սարգսյան» ԱՁ-ն ներկայացնելով հայտի ապահովում տուժանքի ձևով, որպես հայտի ապահովման գումար նշել է 682 000 ՀՀ դրամ, որի չափը ոչ թե հավասար է, այլ գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ տուժանքին կից վճարման պահանջագրի 7-րդ կետով «Կարեն Սարգսյան» ԱՁ-ն լրացրել է ՀԾՀ-ն, որը ըստ հրավերի պահանջի պետք է լրացնեն ֆիզիկական անձինք, ինչպես նաև ստորագրված չէ տուժանքին կից վճարման պահանջագիրը:

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է՝ չեղյալ հայտարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի «ա» ենթակետով կայացված՝ «Կարեն Սարգսյան» ԱՁ-ին թիվ 3-14-րդ, 16-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 49-51-րդ, 55-62-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և մերժել «Կարեն Սարգսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընկերության կողմից բողոքի իրավական հիմքեր նշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետը:

Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգի հրավերի Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգի 7-րդ կետը՝ «լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ»:

Ընթացակարգի հրավերի Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.ա. կետի համաձայն՝ «այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը /լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը»:

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.03.2018թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 02.03.2018թ. թիվ 10019-18 գրությամբ Խորհրդին հայտնել է հետևյալը.

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկ է ներկայացվել թվով 3 ընկերությունների, այդ թվում նաև՝ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից:

Ըստ բողոքաբերի «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից գնման հայտով ներկայացված, միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է՝ հայտի ապահովման չափը գերազանցել է հրավերով սահմանված, հայտի ապահովման համար պահանջվող, գնային առաջարկի 5 տոկոսը: Ընդ որում, հարկ է նշել, որ հայտի ապահովման չափը գերազանցել է գնային առաջարկի 5 տոկոսը ընդամենը 8 << դրամով, որը կլորացման արդյունք է: 08.02.2018թ. << կառավարության 104-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 04.05.2017թ. 526-Ն որոշման մեջ և, մասնավորապես հայտի ապահովման մասով սահմանվել է հետևյալ դրույթը. «9) եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման»:

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն, հանդիսանալով իրավաբանական անձ, ներկայացված հայտի ապահովման լրացման համար պարտադիր դաշտերը լրացրել է ամբողջությամբ, միևնույն ժամանակ ներառելով չպահանջվող (ոչ պարտադիր տեղեկատվություն) ինչը չէր կարող հիմք հանդիսանալ գնման հայտի մերժման համար:

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և դրա մաս կազմող վճարման պահանջագիրը ներառված են մեկ ֆայլում, դրանցում առկա է էլեկտրոնային ստորագրությունը, հետևաբար հայտի ապահովումը էլեկտրոնային ստորագրության (վավերացման) մասով ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի բողոքը իրավաչափ չէ և ենթակա է մերժման:

<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.03.2018թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, ապահովել

է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2018/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն:

2. «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, 3-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 48-53-րդ, 55-64-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով, որի ընդհանուր գինը կազմել է՝ 13 639 840 ՀՀ դրամ:

3. Ընկերությունը ներկայացրել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնագրի ձևով, որի չափը կազմում է 682 000 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն Ընթացակարգի թիվ 3-14-րդ, 16-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 49-51-րդ, 55-62-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով ճանչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն Ընթացակարգի թիվ 3-14-րդ, 16-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 49-51-րդ, 55-62-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով ճանչվել է ընտրված մասնակից:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 27.02.2018թ. բողոքը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 02.03.2018թ.թիվ 10019-18 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման

քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: <u>Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:</u>***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարեն Սարգսյան Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, 3-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 48-53-րդ, 55-64-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով, որի ընդհանուր գինը կազմել է՝ 13 639 840 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի ձևով, որի չափը կազմում է 682 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ն Ընթացակարգի թիվ 3-14-րդ, 16-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 49-51-րդ, 55-62-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով ճանչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի <u>մինչև հինգ տոկոսին</u>:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը <u>հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:</u>***

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***681 992 ՀՀ դրամ***, այլ ոչ ***682 000 ՀՀ դրամ***, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ի կողմից «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին,

քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ի հայտը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից 02.03.2018թ. թիվ 10019-18 գրությամբ Խորհրդին հայտնած այն դիտարկմանը, որ 08.02.2018թ. ՀՀ կառավարության 104-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 04.05.2017թ. 526-Ն որոշման մեջ և մասնավորապես եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 26.01.2018թ., մինչդեռ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.02.2018թ. 104-Ն որոշումը ուժի մեջ է մտել 03.03.2018թ.-ին, որի 2-րդ կետով սահմանվում է, որ ***սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած*** և դեռևս չավարտված ***գնման գործընթացների***, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի ***վրա***:

Ինչ վերաբերում է «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ վճարման պահանջագրի 7-րդ կետով Կարեն Սարգսյան ԱՁ-ն լրացրել է ՀԾՀ-ն, որը ըստ հրավերի պահանջի պետք է լրացնեն ֆիզիկական անձինք, ինչպես նաև ստորագրված չէ տուժանքին կից վճարման պահանջագիրը, ապա Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 7-րդ կետի համաձայն՝ վճարողի ՀԾՀ-ն ***<u>պարտադիր</u> լրացվում է վճարողի կողմից, իսկ <u>ոչ պարտադիր</u> դաշտը՝ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է <u>ֆիզիկական անձ</u>:***

Կարեն Սարգսյան Ա/Ձ-ն Հավելված 10-ին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրած վճարման պահանջագրի մեջ «7. Վճարողի ՀԾՀ» դաշտում նշել է՝ 3708760336:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ վերը նշված դրույթի համաձայն՝ վճարման պահանջագրի մեջ 7-րդ՝ վճարողի ՀԾՀ դաշտը ***պարտադիր լրացնելու պարտականությունը կրում է*** «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 7-րդ կետի համաձայն՝ ***վճարողը***, իսկ ***ոչ պարտադիր*** դաշտը՝ ֆիզիկական անձը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.2 ենթակետը սահմանում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը***, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Կարեն Սարգսյանը, հանդիսանալով անհատ ձեռնարկատեր, և լրացնելով իր ՀԾՀ-ն, գործել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ի կողմից ստորագրված չէ տուժանքին կից վճարման պահանջագիրը, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Կարեն Սարգսյան Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածը՝ հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայանագիրը և կից վճարման պահանջագիրը) ներկայացրել է PDF մեկ ֆայլի տեսքով և էլեկտրոնային ստորագրությունը դրել է միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա:

Կարեն Սարգսյան Ա/Ձի կողմից հայտի ապահովման վճարման պահանջագրի վրա ստորագրություն չի դրվել:

Այսպես, Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային փաստաթուղթը՝ տեղեկություն է գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմին, թե պատվիրատուներին և թե մասնակիցներին ուղղված մի շարք պարզաբանումներում հայտնել է, որ եթե ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացված է մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագիրը կամ վճարման պահանջագիրը պարունակող էջերից որևէ մեկի վրա առկա է փաստաթղթի վրա տեսանելի արտատպված էլեկտրոնային թվային ստորագրություն, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ քանի որ Ընթացակարգը կազմակերված է եղել էլեկտրոնային եղանակով և Կարեն Սարգսյան Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածը՝ տուժանքի մասին համաձայանագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացրել է PDF մեկ ֆայլի տեսքով և էլեկտրոնային ստորագրությունը դրել է միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա, ապա վերջինիս հայտը նշված հիմքով ենթակա չէ մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-

ԳՀԱՊՁԲ-18/2-Գ-1-Գ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 20.02.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի «ա» ենթակետով կայացված՝ Կարեն Սարգսյան Ա/Ձ-ին թիվ 3-14-րդ, 16-26-րդ, 28, 29, 32-37-րդ, 49-51-րդ, 55-62-րդ, 66, 71, 75 և 76-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ